

**ՀՈՒՄԱՆԻՏԱՐ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

## ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆ ԹԵՈՂՈՐՈՍ ՌԵՏՈՒՆԻՆ ԲՅՈՒՋԱՆԴԻԱՅԻ ԿԱՅՈՐ ԿՈՍՏԱՆԴ ԻԻ ԹԻՐԱՆՈՒՄ

*ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ*

*Պարմական գիր. թելնածու*

*Մարտնադարան*

*ՀՀ ԳԱԱ Պարմության ինստիտուտ*

### Ամփոփագիր

Հողվածում քննության են ենթարկվել Բյուզանդիայի կայսր Կոստանդ II-ի հրամանով Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունուն ձերբակալելու հանգամանքները և դրան առնչվող մի շարք հարցեր: Սերետսի վկայությանը՝ Թեոդորոս Ռշտունին ձերբակալվել է Կոստանդ II-ի գահակալության հինգերորդ տարում՝ 645/646 թ.: Այն գրեթե աներկբա ընդունված է մասնագիտական գրականության մեջ: Պատմիչը նաև հայտնում է, որ Հայոց իշխանին կալանելու համար կայսեր ներկայացուցիչ Թուման համագործակցել է Ատրպատականի կառավարչի (մարզպանի) հետ: Սակայն արաբները 642/643 թ. արդեն նվաճել էին Ատրպատականը, ինչը նշանակում է, որ տեղի մարզպանը գտնվում էր նրանց ազդեցության ներքո և չէր կարող համագործակցել նվաճողների ռեսուրսներին՝ Բյուզանդական կայսրության հետ: Արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրի վկայությանը՝ Ատրպատականի մարզպանը գտնվում էր արաբ կառավարչի անմիջական իշխանության ներքո, սակայն նրա եղբայր Բահրամը շարունակում էր պայքարը արաբ նվաճողների դեմ: Հավանական ենք համարում, որ Ատրպատականի կառավարիչը, որը համագործակցել է Թումայի հետ, եղել է հենց այդ Բահրամը:

Թեոդորոս Ռշտունու ձերբակալությանը գրեթե միաժամանակ կայսեր հրամանով արքայից ազատ արձակվեց Հայաստանի նախկին մարզպան Վարազդիթոց Բագրատունին, որին Կոստանդ II-ը որոշել էր նշանակել Հայոց իշխանի պաշտոնին: Սակայն նա անսպասելի դիմեց փախուստի՝ հաստատվելով Տայքում: Սերետսի հաղորդմամբ՝ Վարազդիթոց Բագրատունին և Թեոդորոս Ռշտունին հանդիպել էին Կոստանդնուպոլսում, և մենք կարծում ենք, որ Ռշտունին է դրդել նրան նման քայլ կատարելու: Սակայն չկարողանալով բավարար ուժեր հավաքել՝ Վարազդիթոց Բագրատունին, ի վերջո, ենթարկվեց կայսերը:

**Առանցքային բառեր.** *Թեոդորոս Ռշտունի, Վարազդիթոց Բագրատունի, Սերետոս, Կոստանդ II, Մարասպան (Ատրպատական), Տայք, Թուման, Բահրամ, իշխան, մարզպան:*

VII դարի հայ նշանավոր մատենագիր Սեբեոսի հաղորդմամբ՝ Բյուզանդիայի կայսր Կոստանդ II-ը (641-668) գահակալության հինգերորդ տարում Հայաստան է ուղարկում իր պաշտոնյաներից ոմն Թումայի, որը համագործակցելով Ատրպատականի կառավարչի հետ (աղբյուրը նրան հիշում է «Մարաց իշխան» ձևով)՝ ձերբակալում է Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունուն ու շղթայված տանում Կոստանդնուպոլիս<sup>1</sup>: Կոստանդ II-ի գահակալության հինգերորդ տարին համապատասխանում է 645/646 թվականներին: Սակայն, ձերբակալությանն առնչվող իրադարձությունների պատճառահետևանքային կապի քննությունը պարտադրում է վերանայել մասնագիտական գրականության մեջ գրեթե աներկբայորեն ընդունված այս թվականը<sup>2</sup>: Եթե իրադարձությունները թվագրենք առաջնորդվելով ոչ թե պատմիչի առաջարկած տարեթվով, այլ դրանց տրամաբանական հաջորդականության սկզբունքով, ապա կստանանք այլ պատկեր:

Այսպես, Թեոդորոս Ռշտունուն իշխանությունից հեռացնելու դրդապատճառը որոշակի հայտնում է VIII դ. հայ պատմիչ Ղևոնդը: Թեև նրա վկայությունը պարունակում է ժամանակագրական անախրոնիզմ, և այդ իրադարձությունը նրա երկում թվագրված է Կոստանդ II-ի գահակալության 25-րդ տարով (666 թ.), այդուհանդերձ, բովանդակային առումով այն խիստ ուշագրավ է: Պատմիչը բառացիորեն նշում է, որ կայսրը «Ընկենայր եւ զիշխանն Թեոդորոս յիշխանութենէն վասն նենգութեանն, զոր արար առ զարավարին Պոռկոպայ...»<sup>3</sup>: Պատմիչի խոսքը

1. Սեբեոս, Պատմութիւն, աշխատասիրութեամբ՝ Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 143:

2. Տեր-Ղևոնդյան Ա., Հայաստանը VI-VIII դարերում (Արաբական նվաճումների նախորդող և տիրապետության հաստատման առաջին շրջանում), Երևան, 1996, էջ 58-59: Դանիելյան Է., Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ առաքելական եկեղեցին, (VI-VII դարեր) Երևան, 2000, էջ 162-170, 196-201: Արսեն Շահինյանը կարծում է, որ Սեբեոսը «Մարաց իշխան» ասելով նկատի է ունեցել կամ Իրանի արքա Հազկերտ III-ին կամ նրա որդեգիր Խորասան Ռուստամին, որն այդ ժամանակ երկրի փաստացի ղեկավարն էր (Шагинян А., Армения и страны Южного Кавказа в условиях византийско-иранской и арабской власти, Санкт-Петербург, 2011, стр. 108):

3. Ղևոնդ, Պատմաբանութիւն, Մատենագիրք հայոց, Զ. հատոր, Ը. դար, աշխատասիրութեամբ՝ Գեորգ Տեր-Վարդանեանի, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 741: Արամ Տեր-Ղևոնդյանի իրավացի կարծիքով՝ Ղևոնդը «Սեբեոսից կամ այլ աղբյուրից քաղած տեղեկությունը սխալ է տեղադրում»՝ նկատի ունենալով թվագրումը (Ղևոնդ, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982, էջ 142):

վերաբերում է արաբների հայաստանյան երկրորդ արշավանքի (642/643 թ.) ժամանակ Մարդուցայքի ճակատամարտում Հայաստանում գտնվող բյուզանդական կայազորի կրած պարտությանը: Հայտնի է, որ երբ արաբական զորքը 642/643 թ. Ատրպատականից ներխուժեց Հայաստան՝ ավարի մատնելով Գողթն ու Նախճավան գավառները, կայսեր ուղարկած օգնական ուժերը, Պոռկոպ զորավարի հրամանատարությամբ, դիտավոր անգործություն ցուցաբերեցին՝ Թեոդորոս Ռշտունուն հարկադրելով միայնակ դուրս գալ թշնամու գերակշիռ ուժերի դեմ: Ղևոնդ պատմիչը հստակ արձանագրել է, որ բյուզանդական զորահրամանատարը քանիցս անպատասխան էր թողել արաբների դեմ միասնաբար պայքարելու՝ Ռշտունու դիմումները<sup>1</sup>: Հայոց իշխանի զորքը, նախապես դարանակալելով արաբների երթուղու վրա ընկած կիրճերը, հանկարծակի հարձակմամբ պարտության է մատնում թշնամուն, ինչից ոգևորված՝ Պոռկոպը որոշում է մտնել ռազմական գործողությունների մեջ: Սակայն բյուզանդական կայազորը Մարդուցայքում չարաչար պարտվում է, իսկ Պոռկոպը շտապում է իր ձախողման մեղավոր հոչակել Թեոդորոս Ռշտունուն՝ կայսերը հավաստիացնելով, որ հայերը գործակցել են արաբների հետ՝ ընդդեմ իրենց<sup>2</sup>: Սա չափազանց ծանր մեղադրանք էր, որ կայսրը, ինչպես ստորև կտեսնենք, անպատիժ թողնել չէր կարող:

Հայոց իշխանի ձերբակալության թվականը որոշելու համար առանցքային նշանակություն ունի Ատրպատականի (Մարաց) իշխանի հետ Թումայի համագործակցությունը: Հայտնի է, որ Ռշտունու ձերբակալության՝ Սեբեոսի արձանագրած թվականից (645/646 թթ.) առաջ արաբներն արդեն ամբողջությամբ գրավել էին Ատրպատականը և այնտեղ նշանակել իրենց կառավարչին<sup>3</sup>:

1. Ղևոնդ, Պատմաբանություն, էջ 738:

2. Սեբեոս, Պատմություն, էջ 165:

3. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ, Բ, «Իբն ալ-Ասիր», թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 47-48 (այսուհետև՝ Իբն ալ-Ասիր): Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 16, Արաբական աղբյուրներ, 3, «Արաբ մատենագիրներ. Թ-Ժ դարեր», Ներածությունը և բնագրերից թարգմանությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 294 (այսուհետև՝ Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր):

Ստացվում է, որ Թուման Հայոց իշխանին հեռացնելու համար գործակցել է իր պետության ռիսերին թշնամու՝ Ատրպատականի արաբ կառավարչի հետ: Այդ ժամանակ Հայաստանը գտնվում էր խալիֆայության թիրախում, ինչը նշանակում է, որ Ատրպատականի արաբ կառավարիչը հազիվ թե որոշեր գործակցել բյուզանդացի պաշտոնյայի հետ՝ քաջ գիտակցելով, որ այդպիսով նպաստելու է Հայաստանում խալիֆայության հակառակորդի դիրքերի ամրապնդմանը: Այդպիսով լրջագույն սպառնալիքի տակ կորվելին Իրանում խալիֆայության արձանագրած ձեռքբերումները:

Սերբեոսի վկայությամբ՝ Թուման «Մարաց իշխանի» հետ, ըստ էության, գործակցել է վերջինիս և Բյուզանդիայի կայսեր միջև նախկինում հաստատված դաշինքի հիման վրա. «Սա (Թուման-Վ.Թ.) եկեալ ոչ կամեր եղծանել զուխտն, որ ի մէջ կայսեր և իշխանին Մարաց», գրում է պատմիչը<sup>1</sup>: Հնարավոր համարելով, որ Թուման համագործակցել է Ատրպատականի արաբ կառավարչի հետ՝ Արամ Տեր-Ղևոնդյանն, այդուհանդերձ, տարակուսանք է հայտնում առ այն, թե կայսեր պաշտոնյան վերականգնել է բյուզանդացիների ու Մարաց իշխանի միջև նախկինում եղած դաշինքը: Նա գրում է. «Մարաց իշխան արտահայտությունը պետք է նշանակի Ատրպատականի արաբ կառավարիչ (այդ ժամանակ՝ Վալիտ իբն Ուկրա), սակայն հայտնի չէ, թե դա ինչ ուխտ էր և եղել են արդյո՞ք հարաբերություններ Ատրպատականի կառավարչի և Բյուզանդիայի միջև»<sup>2</sup>: Ատրպատականի արաբ կառավարչի և Բյուզանդիայի միջև նախկինում գոյություն ունեցած դաշինքի մասին տարակուսանքը միանգամայն հիմնավոր է, քանզի դրա վերաբերյալ որևէ տեղեկություն գոյություն չունի: Փոխարենը հայտնի է Հայաստանի բյուզանդապատկան մասի կառավարիչ

1. Սերբեոս, Պատմութիւն, էջ 143: Արսեն Շահինյանը կարծում է, որ պատմիչը նկատի է ունեցել իրանա-բյուզանդական 628 թ. պայմանագիրը (Шагинян А., Армения и страны Южного Кавказа..., стр. 108):

2. Տեր-Ղևոնդյան, Հայաստանը VI-VIII դդ., էջ 58: Օլեգ Բոլշակովը ևս կարծում է, որ Թուման Թեոդորոս Ռշտունու դեմ իրականացվելիք գործողությունների ժամանակ իր թիկունքն արաբների հնարավոր հարձակումներից պաշտպանելու համար նախապես պայմանագիր է կնքել նրանց հետ (Большаков О., История Халифата, т. II, Эпоха великих завоеваний 633-656, Москва, 2002, стр. 166):

Մծեժ Գնունու և «Մարաց իշխանի»՝ Ատրպատականի կառավարիչ Ռուստամի միջև 630-ական թթ. սկզբին կայացած համագործակցության մասին, որի միջոցով Գնունին պաշտոնից հեռացրեց Հայոց մարզպան Վարազտիրոց Բագրատունուն<sup>1</sup>:

Մասնագիտական գրականության մեջ այս խնդիրն առանձին քննության է ենթարկել Էդուարդ Դանիելյանը: Նա կարծում է, որ Թուման համագործակցել է Ատրպատականի այն հատվածի կառավարիչ-իշխանի (մարզպանի) հետ, որն արաբները 642/643 թ. չէին կարողացել նվաճել: Այս տեսակետի համար հիմք է ծառայել XIII դարի արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրի տեղեկությունն այն մասին, որ Ատրպատականի «ամրացված բերդերը» մնացել էին աննվաճ<sup>2</sup>: Էդուարդ Դանիելյանը կարծում է, որ Իբն ալ-Ասիրը նկատի է ունեցել «Մարաց ամուր աշխարհը»<sup>3</sup>: Որ Թումայի հետ գործակցած Մարաց իշխանն Ատրպատականի արաբ կառավարիչը չի եղել, հաստատվում է Սեբեոսի մեկ այլ վկայությամբ: Նկարագրելով 652 թ. Իրանում տեղի ունեցած իրադարձությունները, մասնավորապես՝ արաբների արշավանքները և Հազկերտ III-ի վերջնական պարտությունը, պատմիչը գրում է. «Եւ իշխանն Մարաց, զորմէ վերագոյն ասացի, եթէ գնաց յարեւելս առ արքայն իւրեանց և ապստամբեալ ի տեղի մի ամրացաւ, եւ խնդրեաց երդումն Իսմայելացոցն, եւ գնաց յանապատն ի ծառայութիւն Իսմայելացոցն»<sup>4</sup>: Սեբեոսի ցուցումն առ այն, որ քաղվածքում նշված Մարաց իշխանի մասին ինքը վերն արդեն հիշատակել է, հաստատում է, որ նա իրապես այն անձն է, որը համագործակցել է Թումայի հետ<sup>5</sup>: Սակայն մասնագիտական գրականության մեջ մինչ այժմ վերջնական

1. Սեբեոս, Պատմութիւն, էջ 132: Էդուարդ Դանիելյանն ակնարկում է, որ Թուման «ոչ կամէր եղծանել» հենց Մծեժ Գնունու և Ատրպատականի կառավարչի միջև հաստատված դաշինքը (Դանիելյան, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ առաքելական եկեղեցին, էջ 166):

2. Իբն ալ-Ասիր, էջ 47-48:

3. Դանիելյան, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ առաքելական եկեղեցին, էջ 164-165:

4. Սեբեոս, Պատմութիւն, էջ 164:

5. Դանիելյան, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ առաքելական եկեղեցին, էջ 165, 199:

լուծում չի ստացել այն հարցը, թե ինչն և ինչ հանգամանքներում է Մարաց իշխանը համագործակցել Թումայի հետ: Այս հարցերին ստույգ պատասխանելու համար պետք է նախ պարզել, թե արդյոք ճիշտ է Հայոց իշխանի ձերբակալության՝ Սերետուի վկայակոչած թվականը:

Բանն այն է, որ երբ արաբները 642/643 թ. արշավեցին Ատրպատական, այստեղի մարզպան Իսֆանդիար իրն Ֆառուխզադը, պարտություն կրելով, հպատակվեց նրանց: Արաբ զորահրամանատար Բուքայր իրն Աբդալլահն Իսֆանդիարի միջոցով նվաճեց Ատրպատականը, սակայն նրան պահեց իր մոտ, Իրն ալ-Ասիրի խոսքով՝ գերության մեջ<sup>1</sup>: Այնուհետև Իրն Աբդալլահն, իր փոխարեն նշանակելով Ուտբա իրն Ֆարկադին, հեռացավ Ատրպատականից: Դրանից հետո Իսֆանդիարի եղբայր Բահրամը, հետապնդելով Ուտբա իրն Ֆարկադին, հարձակվեց նրա վրա, սակայն պարտություն կրեց: Տեղեկանալով այդ մասին՝ գերության մեջ գտնող Իսֆանդիարն արաբ կառավարչին առաջարկեց վերահաստատել պայմանագիրը, ինչը և տեղի ունեցավ<sup>2</sup>:

Խնդրի քննության տեսանկյունից ուշագրավ է պայմանագրի տեքստը, որը պահպանվել է Թաբարիի երկում<sup>3</sup>: Հետաքրքրական է, որ այն հասցեագրված է Ատրպատականի ժողովրդին (Թաբարին ինքը նշում է, որ Ուտբա իրն Ֆարկադը պայմանագիրը կնքել է Ատրպատականի ժողովրդի հետ), և ինչպես իրավացիորեն նկատվել է, այնտեղ որևէ հիշատակություն չկա տեղի մարզպանի վերաբերյալ<sup>4</sup>: Սա վկայում է այն մասին, որ Ատրպատականում իրական իշխանությունն ամբողջությամբ անցել էր արաբ կառավարչին, տվյալ դեպքում՝ Ուտբա իրն Ֆարկադին, թեև Իսֆանդիարը, որպես նվաճողին հպատակ, պահպանում էր իր իշխանությունը: Արաբ պատմիչների

1. Իրն ալ-Ասիր, էջ 47-48:

2. Անդ, էջ 48:

3. The History of al-Tabari (Ta'rikh al-rusul wa'l-muluk), vol. XIV, The Conquest of Iran, translated and annotated by G. Rex Smith, New York, 1994, p. 33.

4. Parvaneh P., Decline and Fall of the Sasanian Empire, The Sasanian-Parthian Confederacy and the Arab Conquest of Iran, New York, 2008, p. 279:

միաբերան վկայությամբ՝ այս ամենը տեղի է ունեցել Օմար խալիֆայի օրոք, որը գահակալել է 634-644 թթ.<sup>1</sup>:

Այդ դեպքում ճվ էր Թումայի հետ համագործակցած Մարաց իշխանը: Ատրպատականի իրանական իշխանությունը ներկայացնող միակ պաշտոնյան, որին հաջողվել էր խույս տալ արաբներից և որը նրանց դեմ պայքարի համար դաշնակցի կարիք ուներ՝ Իսֆանդիարի եղբայր Բահրամն է, և, ամենայն հավանականությամբ, հենց նա է Սեբեոսի հիշած Մարաց իշխանը, որը գործակցել է Թումայի հետ: Կարծում ենք՝ միանգամայն տրամաբանական է, որ նա դաշնակցել է իր երկիրը նվաճած արաբների հակառակորդ Բյուզանդիայի հետ: Հավանաբար, Թուման Բահրամին խոստացել է օգնություն ցույց տալ արաբների դեմ պայքարում (նաև՝ ի հաշիվ հայոց զինուժի): Բայց մինևույն ժամանակ բացառված չէ, որ Թումայի հետ գործակցել է Իսֆանդիարը՝ մինչև Բուքայր իբն Արդալլահից պարտվելն ու Ատրպատականի արաբ կառավարչի մոտ արգելափակվելը: Ամեն պարագայի, վերն արված քննությունը թույլ է տալիս ենթադրել, որ Թեոդորոս Ռշտունու ձերբակալումը տեղի է ունեցել մինչև Օմարի գահակալության ավարտը (այսինքն՝ մինչև 644 թ.): Դա միանգամայն հնարավոր է, եթե հաշվի առնենք, որ Հայոց իշխանին նույն այդ ժամանակ Պոռկոպ գորավարի ներկայացրած ծանրագույն մեղադրանքը Կոստանդ II-ին պարտադրում էր անհապաղ ամրապնդել իր դիրքերը Հայաստանում՝ այնտեղ նշանակելով կայսրությանը հավատարիմ կառավարչի<sup>2</sup>:

Մինչ Թեոդորոս Ռշտունու ձերբակալմանն անցնելը, Սեբեոսը հաղորդում է կայսեր դեմ նրա զորավարներից Վաղեստինոսի քարձրացրած ապստամբության, այն ճնշելու և նրա պաշտոնը՝

1. Արաբ մատենագիրներ. Թ-Ժ դարեր, էջ 294: Իբն ալ-Ասիր, էջ 48:

2. Առաջարկելով այս տեսակետը, որ Թեոդորոս Ռշտունու ձերբակալությունը տեղի է ունեցել մինչև 644 թ. և որ Թուման համագործակցել է Ատրպատականի մարզպանի եղբայր Բահրամի հետ, այդուհանդերձ հարկ ենք համարում նշել ևս մեկ վարկած, որը թեև նվազ հիմնավոր է, սակայն ունի գոյության իրավունք: Այսպես, հնագանդվելով արաբներին՝ Իսֆանդիարը պահպանեց իր իշխանությունը, այսինքն՝ Ռշտունու ձերբակալության՝ Սեբեոսի նշած 645/646 թ. նա դեռ շարունակում էր իր գործունեությունը Ատրպատականում (տես Parvaneh, Decline and Fall of the Sasanian Empire, p. 306): Սակայն հարկ է նշել, որ «Մարաց իշխանը» գտնվում էր արաբ կառավարչի անմիջական իշխանության ներքո, ինչը նշանակում է, որ դժվար թե համարձակվեր որևէ կերպ համագործակցել իր գերակայի թիվ մեկ թշնամու՝ Բյուզանդիայի ներկայացուցիչ Թումայի հետ:

գորավարությունը, Հայաստանի «Յունաց կողմի» հավատարիմ իշխաններից ոմն Թեոդորոսին հանձնելու մասին: Այս իրադարձությունն, ըստ Սեբեոսի, տեղի է ունեցել Կոստանդ II-ի գահակալության երկրորդ տարում, այսինքն՝ 642 թ.<sup>1</sup>: Ահա հենց այս Թեոդորոսի առաջարկով է, որ կայսրը որոշում է աքսորից ազատել Հայաստանի նախկին մարզպան Վարազտիրոց Բագրատունուն, որն այնտեղ էր հայտնվել Հերակլիոս կայսեր դեմ մահափորձին մասնակից լինելու մեղադրանքով<sup>2</sup>: Հետաքրքրական է, որ կայսրը Հայոց իշխանի պաշտոնը չի հանձնում Հայաստանի «Յունաց կողմի» հավատարիմ իշխաններից մեկին, այլ վերապահում է Վարազտիրոց Բագրատունուն՝ Հայաստանի նախկին մարզպանին: Թերևս այն պատճառով, որ կայսրն առավելաբար մտահոգ էր Հայաստանի արևելյան՝ նախկին մարզպանական մասի նախարարների դիրքորոշմամբ: Ուստի Վարազտիրոցը, որպես այդ հատվածի երբեմնի մարզպան, հարկավոր էր իրեն՝ նրանց ներուժը համախմբելու և Բյուզանդիայի ազդեցությունն այնտեղ ամրապնդելու համար: Ակնհայտ է, որ Թեոդորոս Ռշտունուն բյուզանդական հատվածի ներկայացուցչով փոխարինելը կարող էր հարուցել Հայաստանի արևելյան մասի նախարարների դժգոհությունը ու նաև դրանով էր պայմանավորված Բագրատունու թեկնածությանը նախապատվություն տալը:

Վերադառնալով Ռշտունու՝ Կոստանդնուպոլիս տեղափոխման հանգամանքներին՝ նշենք, որ Սեբեոսի վկայությամբ՝ կայսրը զայրացավ՝ Հայոց իշխանին կալանված տեսնելով, քանզի, ինչպես նույն աղբյուրն է հայտնում, նման հրամանն չէր տվել<sup>3</sup>: Ակնհայտ է սակայն, որ նրա «զայրոյթը» ձևական էր<sup>4</sup>: Թեոդորոս

1. Սեբեոս, Պատմություն, էջ 142:

2. Սեբեոսի հաղորդմամբ՝ Հերակլիոսը մահվան մահճում իր որդի Կոստանդինից պահանջել էր ողորմաճություն ցուցաբերելով ազատ արձակել բոլոր հանցապարտներին, այդ թվում՝ Բագրատունի ասպետին և նրա ընտանիքին, որոնց ինքն աքսորել էր (Անդ., էջ 137-138): Սակայն ուշագրավ է, որ Վարազտիրոցի ազատման դրվագում պատմիչը չի հիշում այդ ժամանակվա կայսեր՝ Կոստանդ II-ի հոր տված երդումը, ինչը նշանակում է, որ Բագրատունի իշխանի ազատման հիմքն ամենևին էլ Հերակլիոսի պատգամը չէր:

3. Անդ., էջ 143:

4. Արսեն Շահինյանն արդարացիորեն կասկածի տակ է դնում այս վկայության հավաստիությունը: Նա կարծում է, որ կայսրը ցանականում էր Հայաստանում ամրապնդել իր դիրքերը (Шагинян А., Армения и страны Южного Кавказа..., стр. 108).

Ռշտունու արգելափակմամբ Բյուզանդիայի ինքնակալն, անշուշտ, մտադիր չէր Հայաստանը զրկել կառավարչից, ինչն անհեռատես քայլ կլիներ արաբների անմիջական սպառնալիքի պայմաններում: Մարդուցայքի պարտության «վրեժը» լուծելուց զատ, Կոստանդ II-ը նպատակ ուներ կասեցնելու Թեոդորոս Ռշտունու շուրջ Հայոց նախարարական ներուժի համախմբումը. «Բյուզանդիան ուղիներ էր փնտրում խանգարելու Թեոդորոս Ռշտունու իշխանության ամրապնդմանը, իսկ հնարավորության դեպքում՝ նրան չեզոքացնելու և մեկուսացնելու համար»<sup>1</sup>, - իրավացիորեն նկատում է Էդուարդ Դանիելյանը: Առանց բյուզանդացիների օգնության արաբների դեմ արձանագրած թեկուզ ոչ մեծ հաղթանակը, վերջիններիս հայաստանյան երկրորդ արշավանքի ժամանակ բյուզանդական կայազորի չեզոքությունն ու ապա պարտությունը կարող էին Հայաստանի արևելյան հատվածի իշխանների շրջանում կայսրության իշխանությունից դուրս գալու տրամադրություններ առաջացնել: Կոստանդ II-ին, անշուշտ, անհանգստացնում էր նաև նախարարների շրջանում Թեոդորոս Ռշտունու աճող ազդեցությունը: Կայսրն այս քայլով ցանկանում էր ի դեմս նրանց (առավել ևս՝ Հայաստանի արևելյան հատվածի) ձեռք բերել հավատարիմ հենարան խալիֆայության դեմ հետագա պատերազմում, ուստի վճռեց իշխանությունը հանձնել մեկին, որն առավել վստահելի և հավատարիմ կլիներ իրեն<sup>2</sup>: Կոստանդ II-ը հավանաբար նկատի էր առել նաև այն հանգամանքը, որ աքսորից ազատված Բագրատունի իշխանն առավել պարտավորված կլիներ իր հանդեպ: Մյուս կողմից, Բյուզանդական արքունիքին պետք է որ մտահոգեր խալիֆայության քաղաքականության այն սկզբունքը, որով արաբներից նվաճված երկրամասերի ղեկավարները հպատակության դիմաց պահպանում էին իրենց իշխանությունը: Այդպիսի օրինակներ կային Հայաստանի հարևան Իրանում, որոնք կարող էին «գայթակղության քար» դառնալ Թեոդորոս Ռշտունու համար: Բագրատունուն Հայոց իշխանի բարձր պաշտոնին

1. Դանիելյան, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ առաքելական եկեղեցին, էջ 163:

2. Шагинян А., Армения и страны Южного Кавказа..., стр. 108

նշանակելը մասնագիտական գրականության մեջ իրավացիորեն համարվել է Ռշտունու դեմ ուղղված քայլ<sup>1</sup>:

Աքսորից Կոստանդնուպոլիս վերադարձած Վարազտիրոց Բագրատունին, սակայն, ի չիք դարձրեց Կոստանդ II-ի ծրագիրը: Նա անակնկալ փախավ կայսրության մայրաքաղաքից՝ ապաստանելով Տայքում<sup>2</sup>: Դժվար թե Վարազտիրոցն անտեղյակ լիներ արքայից իր վերադարձի իրական դրդապատճառի մասին: Ուստի հարց է ծագում, թե ինչը նրան ստիպեց դիմելու այդ քայլին: Ըստ պատմական աղբյուրի՝ փախուստի պատճառի վերաբերյալ Վարազտիրոց Բագրատունին կայսեր միջնորդքանագնացին ասել էր, որ իրեն իբր կասկածելի են թվացել ոմանց ասած այն խոսքերը, «եթե անդրէն երթալոց ես ուստի եկիրն, վասն այնորիկ զահի հարայ և փախայ»<sup>3</sup>: Իհարկե, կարելի է կարծել, որ խոսքը վերաբերում է նրա արքայավայրին, սակայն դա քիչ հավանական է, քանզի նա նոր էր ազատվել և այն էլ կայսեր կամքով: Վերոնշյալ քաղվածքից կարելի է մակաբերել, որ Վարազտիրոցին արքունիքում հայտնել էին, թե շուտով գնալու է այնտեղ, այսինքն՝ Հայաստանի արևելյան հատված, որտեղից ժամանակին փախել էր կայսեր մոտ: Ինչը կարող էր լինել Վարազտիրոց Բագրատունու երկյուղի պատճառը: Եթե ստույգ է Սեբեոսի վկայությունը նրա փախուստի դրդապատճառի մասին, ապա պետք է կարծել, որ Հայաստանի արևելյան մասում դժգոհություն էր առաջացրել Թեոդորոս Ռշտունու ձերբակալությունը, և այդ պայմաններում Բագրատունին խուսափել է վերադառնալ որպես Ռշտունուն փոխարինող և կայսեր դրածո: Մինչդեռ կայսեր կամքին հակառակ՝ փախուստի միջոցով հայրենիք գալը կարող էր ամբողջովին փոխել տեղի իշխանների վերաբերմունքը նրա նկատմամբ: Արսեն Շահինյանն իրավա-

1. Տեր-Ղևոնդյան, Հայաստանը VI-VIII դարերում, էջ 59: Ուշագրավ է Էդուարդ Դանիելյանի դիտարկումն առ այն, որ կայսրը Վարազտիրոցին արքայից ազատելուց հետո որոշ ժամանակ պահել է արքունիքում, որի նպատակն, ըստ հետազոտողի, ի դեմս Բագրատունի ասպետի՝ Հայոց իշխանի զորավարի համար կայսեր հովանավորությունը վայելող թեկնածուի պատրանք ստեղծելն էր (Դանիելյան, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ առաքելական եկեղեցին, էջ 167):

2. Սեբեոս, Պատմություն, էջ 144:

3. Անդ:

ցիորեն նկատում է, որ Վարազտիրոց Բագրատունին փախուստի դիմելով ձգտել է վերականգնել Հայոց մարզպանի իր երբեմնի պաշտոնը<sup>1</sup>: Հարկ է նկատի առնել, որ այդ ժամանակ Հայոց մարզպանությունը գոյություն չուներ, և Վարազտիրոց Բագրատունին, փաստորեն, վճռել էր զբաղեցել Հայոց իշխանի պաշտոնը, սակայն ոչ թե կայսեր նշանակմամբ, այլ նրանից անկախ: Ճիշտ է, նա եկավ ոչ թե Հայաստանի նախկին իրանապատկան հատված, այլ Տայք՝ բյուզանդապատկան մաս, սակայն պարզից էլ պարզ է, որ միայն այնտեղ ապաստանելու և Հայոց քաղաքական կյանքից մեկուսանալու համար չէ, որ դիմել էր այդ քայլին: Ակնհայտ է, որ նա պետք է ռազմաքաղաքական աջակցություն որոներ երկրի արևելյան մասում, որի մարզպանն էր եղել: Վարազտիրոց Բագրատունին, երկար ժամանակ հեռու լինելով Հայաստանից (նա աքսորվել էր Աֆրիկա), անտեղյակ էր հայրենիքում տիրող ռազմաքաղաքական կացության, արաբա-բյուզանդական հակամարտության արձանագրած արդյունքների և հակամարտող ուժերի հարաբերակցության մասին: Նման վճռորոշ քայլ կատարելուց առաջ նա, իհարկե, պետք է քաջատեղյակ լիներ Հայաստանում առկա իրավիճակին և, անշուշտ, վստահ, որ գոնե երկրի արևելյան հատվածի նախարարները կաջակցեն իրեն: Որտեղից նա կարող էր քաղել այդ հույժ կարևոր տեղեկությունները և ստանալ համապատասխան երաշխիք: Սերբոսի արձանագրած մի ուշագրավ դրվագ, կարծես, հուշում է հարցի պատասխանը: Նրա հաղորդմամբ՝ Կոստանդնուպոլսում Բագրատունին հանդիպել էր իր վաղեմի բարեկամ Թեոդորոս Ռշտունուն. «Յայնժամ տեսին զմիմեանս ասպետ և Թեոդորոս Ռշտունեաց տէրն, և հեղուին արտասուս ի վերայ պարանոցի իւրեանց, զի էին սննդակիցք միմեանց ի դրանն Խոսրովայ արքային Պարսից»<sup>2</sup>: Հավանական է կարծել, որ հենց Ռշտունին է Բագրատունուն հայտնել Հայաստանում ստեղծված իրավիճակի, բյուզանդական ազդեցության թուլացման, արաբներից կայսրության կրած պարտությունների

1. Шагинян, Армения и страны Южного Кавказа..., стр. 109.

2. Սերբոս, Պատմութիւն, էջ 143:

մասին՝ տեղեկություններ, որոնք բյուզանդական արքունի պաշտոնյաները չէին հաղորդելու նրան: Ստեղծված իրավիճակում Բագրատունու՝ կայսեր նշանակմամբ վերադարձը հայրենիք չուներ այլ նպատակ, քան կայսրության և բյուզանդամետ տարրի ազդեցության մեծացումը: Հայաստանում Բյուզնադիային հավատարիմ ուժերի ավելացմամբ ու նրանց դիրքերի ամրապնդմամբ Կոստանդ II-ը ձգտում էր բացառել արաբների հետ հայ նախարարների հնարավոր գործակցությունը, ինչը միանգամայն իրատեսական էր, եթե նկատի ունենանք, որ բյուզանդական «օգնական» կայագորն արաբների երկրորդ ներխուժման ժամանակ մնացել էր դիտորդի դերում՝ հայերին թողնելով թշնամու գերակշիռ ուժերի դեմ միայնակ: Այսինքն՝ Հայաստանի արևելյան մասի նախարարների շրջանում Բյուզնադիան չէր համարվում հուսալի հենարան: Պահը միանգամայն նպաստավոր էր կայսրության ազդեցությունից հրաժարվելու և Հայաստանի (առավել ստույգ՝ նրա արևելյան մասի) քաղաքական ինքնուրույնությունը վերականգնելու համար: Արաբների հայաստանյան երկրորդ արշավանքն ավարտվել էր, խալիֆայությունը զբաղված էր Իրանի նվաճմամբ, և այսրկովկասյան տարածաշրջանը, կարծես, շունչ քաշելու հնարավորություն էր ստացել:

Այսպիսով, մեծ է հավանականությունը, որ Վարազտիրոց Բագրատունին Թեոդորոս Ռշտունու դրդմամբ է առանց կայսեր համաձայնության վերադարձել Հայաստան՝ երկրի քաղաքական ինքնուրույնությունը վերականգնելու հնարավորությունն այս անգամ էլ չկորցնելու մտադրությամբ: Եթե այս ենթադրությունը ստույգ է, ապա պետք է կարծել, որ հենց Թեոդորոս Ռշտունին է Բագրատունուն հավաստիացրել, որ իրեն հավատարիմ ուժերը կհամագործակցեն նրա հետ: Կարծում ենք՝ Թեոդորոս Ռշտունուց մեծ ջանքեր չեն պահանջվել Բագրատունի իշխանին համոզելու համար: Ի վերջո, նա իր անկախական նկրտումների պատճառով էր իշխանությունից հեռացվել: Սակայն իրադարձություններն այլ ընթացք ունեցան:

Կոստանդ II-ը, անակնկալի գալով Վարազտիրոցի փախուստից, հրամայում է ամեն գնով գտնել նրան: Այդ նպատակով Թեոդորոս գորավարը հսկողություն է սահմանում Հայաստանի ճանապարհների ու կիրճերի վրա ու, ի վերջո, պարզում Բագրատունի իշխանի գտնվելու վայրը: Դրանից հետո Թեոդորոսը Ներսես Գ Տայեցուն (641-661 թթ.) որպես բանագնաց ուղարկում է նրա մոտ՝ պահանջելով հավատարմության երդում տալ կայսերը<sup>1</sup>:

Տայքում ամրացած Բագրատունի իշխանը, ըստ երևույթին աջակցություն չստանալով նախարարներից և անկարող լինելով դիմակայել կայսերական ու կայսերամետ ուժերի ճնշմանը, հարկադրաբար տեղի տվեց Կոստանդ II-ի պահանջին՝ հավաստիացնելով, որ «Ծառայ քոյ եմ, եւ ոչ ուրեք երթամ ի ծառայութենէդ ձերմէ»<sup>2</sup>: Կոստանդ II-ը «սիրահոժար ներեց» Բագրատունի ասպետի երկրորդ անհնազանդությունը՝ նրան շնորհելով Հայոց իշխանի պաշտոնը:

Բայց մինչև Վարազտիրոցին Հայոց իշխանի պաշտոնում նշանակելու հրովարտակը կհասներ Հայաստան, Բագրատունի իշխանը հանկարծամահ է լինում: Իրադարձություններին ականատես պատմիչ Սեբեոսը գրում է, որ մահվան պատճառը վերահաս հիվանդությունն էր<sup>3</sup>, մինչդեռ նրանից մեկ դար անց գործած Ղևոնդ պատմիչը խիստ որոշակի հայտնում է, որ Վարազտիրոցին սպանել են բյուզանդացիները, որի համար նրա որդին հետագայում վրեժխնդիր է եղել<sup>4</sup>: Իհարկե, տրամաբանորեն նախապատվությունը պետք է տալ իրադարձությանը ժամանակագրորեն առավել մոտ աղբյուրի վկայությանը, սակայն միշտ չէ, որ այն արժանահավատ է լինում. շատ դեպքերում իրադարձություններին ականատես պատմիչները կաշկանդված են լինում իրականությունը ներկայացնելիս, հատկապես, երբ հաղորդվելիք տեղեկու-

1. Սեբեոս, Պատմություն, էջ 144:

2. Անդ:

3. Անդ:

4. Ղևոնդ, Պատմաբանություն, էջ 746:

թյունը վերաբերում է իշխանավորներին և տիրակալներին (առավել ևս՝ օտար)՝:

Արդ, եթե ստույգ է, որ Վարազտիրոցին սպանել են բյուզանդացիները, ապա դա կատարվել է Կոստանդ II-ի հրամանով: Դատելով Սեբեոսի երկի մի շարք հատվածներից՝ պատմիչի վերաբերմունքը կայսեր նկատմամբ եղել է խիստ դրական, անհրաժեշտության դեպքում՝ զգուշավոր և խուսափողական: Օրինակ, Սեբեոսը Կոստանդ II-ի հրամանով հայերին ներկայացված դավանափոխության պահանջը վերագրում է ինչ-որ «ապստամբ վիշապների», որոնք կայսեր առաջ ամբաստանել էին հայերին՝ այդպիսով սաղորելով նրան<sup>2</sup>: Ուշագրավ է, որ Սեբեոսը Վարազտիրոցի փախուստը համարում է «նենգություն»<sup>3</sup>: Այսինքն՝ հավանական է ենթադրել, որ պատմիչը հորինել է Վարազտիրոցի հանկարծահաս մահվան տեղեկությունը՝ այդպիսով խուսափելով կայսերը մեղադրելուց:

Այսպիսով, եթե Վարազտիրոցի մահվան կապակցությամբ առաջադրված վարկածը ստույգ է, ապա ինչնու կայսրը հրամայեց սպանել մեկին, որից ստացել էր հավատարմության երդում և որին նշանակել էր Հայոց իշխանի պաշտոնին: Հարցն ունի առնվազն երկու ենթադրական պատասխան: Վարազտիրոց Բագրատունու անհնազանդությունը ներելով հանդերձ՝ Կոստանդ II-ն, այդուամենայնիվ, կորցրել է նրա նկատմամբ վստահությունը, ուստի լրացուցիչ զգուշավորություն ցուցաբերելով, վճռեց հեռացնել ասպարեզից:

1. Այս առումով բավական պերճախոս է, օրինակ, XII դարի պատմիչ Մատթեոս Ուտհայեցու դիրքորոշումը, որը հայկական իշխանությունների նկատմամբ խաչակիրների գործած վայրագությունների մասին շարադրելիս գրում է. «...զբազում անիրաւութիւնս նոցա կամի գրել, բայց ոչ համարձակեցաք, զի ընդ իշխանութեամբ նոցա էաք» (Մատթեոս Ուտհայեցի, Ժամանակագրութիւն, Բ. տպագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 339): «Գաղտնապահ» լինելը բնորոշ էր միջնադարի այլ հայ պատմիչների ևս: Այս առումով նշելի է XIII դարի մատենագիր Կիրակոս Գանձակեցու Հայաստանի իշխանավորների հետ Կարակորում մեկնելու ժամանակ Կիլիկյան Հայաստանի թագավոր Հեթում Ա-ի (1226-1270) ունեցած հանդիպմանը քննարկված հարցերի մասին լռելը, որի պատճառը, Գրիգոր Միքայելյանի իրավացի կռահմամբ, իր երկասիրությունը մոնղոլական տիրապետության և Հեթումի թագավորության շրջանում շարադրելն էր (Микаелян Г., История Киликийского армянского государства, Ереван, 1952, стр. 306).

2. Սեբեոս, Պատմութիւն, էջ 147-148:

3. Անդ, էջ 144: Սակայն բացառված չէ, որ պատմիչն այս եզրույթն օգտագործել է խորամանկություն իմաստով:

Որքան էլ անսպասելի կարող է թվալ, սակայն Կոստանդ II-ը Վարազդտիքոցի մահվանից հետո Թեոդորոս Ռշտունուն վերականգնեց Հայոց իշխանի պաշտոնին (դա թույլ է տալիս ենթադրել, որ նա այդ պաշտոնի համար չուներ այլընտրանքային թեկնածու): Հավանական է կարծել, որ այդ որոշումը կայարն ընդունել է մինչև Վարազդտիքոցի մահը, և վերջինիս սպանությունը որպես Ռշտունուն ուղղված ուղերձ-սպառնալիք կազմակերպելով՝ ցանկացել է բացառել վերջինիս հետագա հնարավոր անհնազանդությունը:

Ուշագրավ է Սեբեոսի վկայությունը, թե հայ իշխանները դեմ են եղել Հայոց իշխանի պաշտոնին Թեոդորոս Ռշտունու վերանշանակմանը<sup>1</sup>: Նրանք կարող էին լինել ոչ միայն Հայաստանի բյուզանդապատկան հատվածի նախարարները, որոնք ավանդաբար ունեին բյուզանդամետ դիրքորոշում, այլև արևելյան մասի իշխանավորներից, որոնք Կոստանդ II-ի նշանակած Թեոդորոս գորավարի ազդեցությամբ հարել էին կայսրությանը: Այս առումով հետաքրքրական է պատմիչի մեկ այլ տեղեկություն, որից մակարեբելի է, որ Թեոդորոսին Տայքում Վարազդտիքոցի գտնվելու ընթացքում հարել էին շատ նախարարներ. «Յայնժամ հրաման ետ զաւրավարն Յունաց Թեոդորոս հանդերձ իշխանաւքն զաւրուն և նախարարաւքն Հայոց՝ արձակեալ զՆերսէս կաթողիկոս առ ասպետ...»<sup>2</sup>, - գրում է պատմիչը: Սա նշանակում է, որ այդ ընթացքում կայսեր ներկայացուցչին հաջողվել էր բազմաթիվ համախոհներ ձեռք բերել հայ նախարարների շրջանում և ընդլայնել Բյուզանդիային հավատարիմ ուժերի շրջանակը, որպիսի պայմաններում Վարազդտիքոց Բագրատունին, իբրև քաղաքական գործոն, կորցրել էր իր կարևորությունը, իսկ Թեոդորոս Ռշտունու իշխանության վերականգնումը դարձել էր նվազ վտանգավոր: Կոստանդ II-ին, անշուշտ, ձեռնտու էր Հայոց իշխանի նկատմամբ նախարարների մի մասի ընդդիմությունը, որ կարող էր օգտագործել նրա ազդեցությունը զսպելու և կայսեր ու արքունիքի

1. Անդ, էջ 145:

2. Անդ, էջ 144:

հանդեպ հավատարմությունն ապահովելու համար: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները՝ կայսրը, բոլոր դեպքերում, ճիշտ քաղաքական հաշվարկ էր կատարել, քանզի Թեոդորոս Ռշտունին ընդհուպ մինչև 652 թ. հայ-արաբական պայմանագիրը հավատարիմ մնաց Բյուզանդիային:

### SUMMARY

#### **Armenian Prince (Išxan) T'eodoros Rštuni as a Target of Byzantine Emperor Constants II**

*Vahe Torosyan*

*PhD in History*

*Matenadaran*

*Institute of History of NASA*

The article examines the date and motives of the arrest of the Armenian prince (išxan) T'eodoros Rštuni by order of the Byzantine emperor Constants II, as well as other issues relating to this event. According to Sebēos, Rštuni was arrested in the fifth year (645/646) of Constants' reign. The scholarly literature almost unambiguously accepts this date. The historian also mentions that the representative of the Byzantine emperor T'umas collaborated with the ruler (marzpan) of Media (Atrpatakan) for the arrest. However, the Arabs had already captured Atrpatakan by the 642/643, which means that the local ruler was under their control and could not cooperate with the Byzantine Empire, the enemy of the Caliphate. According to the Arab historian Ibn al-Asir, the ruler of Atrpatakan was captured by the Arabs, but his brother, Bahram, continued to fight against them. It can be believed that the ruler of Atrpatakan, who collaborated with T'umas, was probably Bahram.

At the same time with the arrest of T'eodoros Rštuni, Varaztirots Bagratuni, the former ruler (marzpan) of Armenia, was released from exile by the order of the emperor. Constants II decided to appoint him as the Armenian prince (ishkhan). However, Bagratuni escaped unexpectedly and hid in Tayk'. According to Sebeos, before that Varaztirots Bagratuni and Rštuni had met in Constantinople. We think that T'eodoros Rštuni persuaded him to take that step. But, unable to muster enough forces, Varaztirots Bagratuni was forced to obey the emperor.

**Keywords:** *History of Armenia, T'eodoros Rštuni, Varaztirots Bagratuni, Sebeos, Constants II, Media, Atrpatakan, Tayk', T'umas, Bahram, ishkhan, marzpan.*

РЕЗЮМЕ

**Князь (Ишхан) Армении Теодорос Рштуни  
как мишень Византийского императора Константа II**

*Ваге Торосян*

*Кандидат исторических наук*

*Матенадаран*

*Институт Истории НАН РА*

В статье рассматривается дата и мотивы ареста армянского князя (ишхан) Теодороса Рштуни по приказу византийского императора Константа II-ого, а также другие вопросы, касающиеся этого события. Согласно Себеосу, Рштуни был арестован на пятом году (645/646 г) правления Константа. В научной литературе почти однозначно принята эта дата. Историк также отмечает, что для этого представитель византийского императора Тума сотрудничал с правителем (марзпан) Мидии (Атрпатакана). Однако, арабы захватили Атрпатакан еще в 642/643 г. , а это значит, что местный правитель, находящийся под их контролем, не мог сотрудничать с Византийской империей, врагом Халифата. Согласно арабскому историку Ибн аль-Асиру, правитель Атрпатакана был взят в плен, но его брат, Бахрам, продолжал борьбу с арабами. Мы считаем вероятным, что правителем Атрпатакана, который сотрудничал с Тумой, был Бахрам.

Одновременно с арестом Теодороса Рштуни по приказу императора был освобожден из ссылки бывший правитель (марзпан) Армении Варазтироц Багратуни, которого Константин II решил назначить на пост Армянского князя. Однако Багратуни неожиданно бежал, скрывшись в Тайке. По словам Себеоса, до этого Варазтироц Багратуни и Рштуни встретились в Константинополе. Мы предполагаем, что на этот шаг его подтолкнул Теодорос Рштуни. Но, не сумев собрать достаточно сил, Варазтироц Багратуни был вынужден подчиниться императору.

**Ключевые слова:** *История Армении, Теодорос Рштуни, Варазтироц Багратуни, Себеос, Константин II, Мидия, Атрпатакан, Тайк, Тума, Бахрам, ишхан, марзпан.*